ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնդիկավոր առանցքակալների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան 30 հունվարի 2020թ.
ժամը. 10:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Գ. Խոսրովյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի գնահատման մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար գնդիկավոր առանցքակալների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվեց հետևյալը՝

1. «Սենտրալ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում՝ հավելված 1.1-ում, ապրանքների մակնիշ դաշտում լրացված է ապրանքային նշանը:
2. «ԷՆԵՐՍԻՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ, իսկ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառված բոլոր փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային ստորագրությամբ: Դիմում հայտարարության (հավելված 1) փաստաթղթում նշված չեն ընթացակարգին մասնակցելու չափաբաժինների համարները:
3. «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում, մասնավորապես, հավելված 1.1-ում բացակայում է մասնակցի անվանումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Նիստը կասեցնել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել «Սենտրալ» ՍՊ, «ԷՆԵՐՍԻՍ» ՍՊ և «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊ ընկերություններին շտկելու անհամապատասխանությունները:
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ հայտերի գնահատման (անհամապատասխանությունների շտկման) նիստ հրավիրել 2020 թվականի հունվարի 31-ին ժամը 16:45-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Ս. Մելքոնյան

_____ Գ. Խոսրովյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան